Երեկոյեան լուսավառութիւն կար, և ճոխ ընթրիք էր պատրաստած Մեծ հիւրի համար։

Սեպտ. 15ին առաւօտեան վաղ Նորին Օծութիւնը դուրս եկաւ Քարվանսարայից, տեղական հոգեւորականութեան ուղեկցութեամբ. առջեւից գնում էին աստիճանաւոր Բագրատէն և գաւառապետի օգնական Միխայլովը։ Երբ հասաւ Ղազախ նոր քաղաքը Վեհափառին մօտեցաւ գաւառապետ իշխան Թարխանովը, յետոյ ներկայացան Ղազախի գաւառի քահանայք և քաղաքի պատուաւոր անձինք. թէ քաղաքի և թէ շրջակայ գիւղերի բնակիչները համբուրեցին Վեհափառի աջը և վայելեցին օրհնութիւնը։ 10 ժամին Վեհափառ տէրը գաւառապետի և բազմաթիւ թիկնապահների ուղեկցութեամբ բարեհաճեցաւ հասնել Աղստաֆայ երկաթուղու կայարանը, ուր սպասում էր Նորին Վեհափառութեան Գանձակի յաջորդ Գրիգորիս վարդապետը Գանձակ քաղաքի պատգամաւորութեան հետ։ Վեհափառը ընդունելով վարդապետին և պատգամաւորութիւնը, հրամայեց ճանապարհը շարունակել մինչեւ երկաթուղու կայարանը, ուր բարեհաճեցաւ նախաճաշել։ Այս տեղ Վեհափառը տեսակցելով իշխան Թարխանեանցի հետ՝ հրաւիրեց իւր մօտ գանձակեցիներին, հարց ու փորձ արաւ նոցա վիճակի մասին, օրհնեց նոցա և արձակեց։ Ճիշդ 12 ժամին կայարանի կառավարիչը յայտնեց Վեհափառին, թէ պատրաստուած է առանձին գնացք. Վեհափառը մտաւ երկաթուղին և սա առաջ շարժուեց. 3 ժամին 5 րոպէին Նորին Վեհափառութիւնը բարեյաջող մուտք գործեց Թիֆլիզ քաղաքը։ 15ին սեպտեմբերի 3րդ ժամ, կէս օրից յետ, երբ Նորին Օծութեանը բերող երկաթուղու առանձին գնացքը ծանրութեամբ մօտեցաւ Թիֆլիզի կայարանին, սորա պատշգամբում ժողոված հայերն և համքեարներն իրանց դրօշակներով թնդացրին օդը «կեցցէ Հայոց Հայրապետ» աղաղակելով։ Կայարանի պատշգամբում դիմաւորեցին Վեհափառ Հայրապետին Թիֆլիզի քաղաքագլուխն, ոստիկանապետն և այլ պատուաւոր քաղաքացիք. Նորին Օծութիւնը ուղեկցութեամբ իւր պաշտօնեաների անցաւ բազմութեան միջով և մտաւ կայսերական սենեակներն, ուր Նրան ներկայացան շատ պատուաւոր անձինք. դուրսը պատրաստ կանգնած էր քառաձի